ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Իվանյան Գոհար Անաստասի

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Ը 00.02 - "Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում" մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր **Ա.Խ.Մարկոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր **Վ.Բ.Բոստանջյան**

տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ **Ն.Ն.Խաչատրյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
Տնտեսագիտության ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. դեկտեմբերի 12-ին, ժամը 13.30-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան 52:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 11-ին:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա.Հ.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Այսօր, երբ Հայաստանի Հանրապետությունում ավարտվում է կրթության ոլորտի բարեփոխումների առաջին փուլը, հարց է առաջանում, թե որքանո՞վ են արդյունավետ եղել կատարված փոփոխությունները, ունի արդյո՞ք Հայաստանի կրթական համակարգը Բոլոնիայի գործընթացին ինտեգրվելու և բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտ ռեսուրս, ի՞նչ քայլեր ունենք ձեռնարկելու առաջիկայում: Սրանք հարցեր են, որոնց պատասխանը պետք է տրվի ամենամոտ ապագայում: Նշված վերափոխումների գործում մեծ են կրթության, և, մասնավորապես, ճարտարապետաշինարարական մասնագետների կրթության որակի բարելավման ուղիների դերը, ինչով և պայմանավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է բարձրագույն կրթության եվրոպական փորձի ուսումնասիրության հիման վրա մշակել և հանձնարարականներ առաջարկել ճարտարապետաշինարարական մասնագետների կրթության որակի բարելավման կազմակերպական ուղիների վերաբերյալ:

Նախանշված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ներկայացնել տեխնիկական համալսարաններում «կրթական համակարգի ծառայությունների որակ» հասկացության և դրա գնահատման հիմնական մոտեցումները,
- վերլուծել որակի գնահատման միջազգային փորձը և բացահայտել ՀՀ տեխնիկական համալսարաններում որակի ապահովման հիմնախնդիրները,
- ներկայացնել ճարտարապետաշինարարական բուհերում հավատարմագրման նախապատրաստման հիմնախնդիրները,
- բացահայտել ամբիոնների դերը ինժեներաշինարարական կրթության կայուն զարգացման գործում,
- ներկայացնել որակի ներքին և արտաքին ապահովման գնահատման և աուդիտի հնարավորությունները,
- ներկայացնել ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի վեցերորդ մակարդակի ներդրման առանձնահատկությունները ճարտարապետաշինարարական մասնագիտությունների համար:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տեխնիկական բարձրագույն ուսումնական հաստատություններն են, մասնավորապես Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (այսուհետ Համալսարան), իսկ ուսումնասիրության առարկան՝ կրեդիտային համակարգի ներդրմամբ պայմանավորված կրթության որակի ապահովման առկա հիմնախնդիրների լուծումների կառավարումը:

Հետազոտության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Առաջադրված նպատակին հասնելու և ձևավորված խնդիրները լուծելու համար տեսական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, հայեցակարգերը, մոդելները, մեթոդները, Բոլոնիայի հռչակագրով սահմանված սկզբունքները և դրանից բխող գործընթացով՝ բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները, հայերենական և

արտերկրի հետազոտողների կողմից բուհերի կառավարման ուղղությամբ կատարված հետազոտությունները: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ սահմանադրությունը, օրենքները, կառավարության որոշումները, այլ իրավական ակտեր, ինչպես նաև ԱԿԾ, կրթության և գիտության նախարարության, միջազգային կազմակերպությունների հրապարակումները, պաշտոնական տեղեկագրերը, տարբեր փորձագետների գնահատականները, գիտաժողովների նյութերը, գիտական և գիտամեթոդական ամսագրերի հրապարակումները: Հետազոտությունների իրականացման համար կիրառվել են համակարգային, իրավիճակային, ինդուկցիայի ու դեդուկցիայի, վիճակագրական, խմբավորումների ու համեմատական վերլուծությունների մեթոդներ:

Հետազոտության հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Համակարգելով կրթության որակի բարելավման վերաբերյալ մասնագիտական գրականությունում և իրավական փաստաթղթերում կիրառվող բարձրագույն կրթական ծառայությունների վերաբերյալ հիմնական մոտեցումները և հասկացությունները, ատենախոսությունում որպես նորույթ են ներկայացվել.

- մշակվել է ճարտարապետաշինարարական մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման մոդել, որի կիրառումը թույլ կտա Համալսարանում կրթական ծրագրերի բարեփոխումներն իրականացնել համակարգված ձևով և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համապատասխան,
- բացահայտվել են կրթության որակի բարձրացման հիմնական ուղղությունները, մասնավորապես ինստիտուցիոնալ կարողության ինքնավերլուծության հիմնախնդիրները, ինչպես նաև հիմնավորվել է ճարտարապետության և շինարարության մասնագիտությունների խոշորացման անհրաժեշտությունը,
- մշակվել է ավարտական աշխատանքների գնահատման համակարգի առանձնահատկությունները ճարտարապետական մասնագիտությունների համար, որը հնարավորություն կտա աշխատանքի գնահատման ժամանակ հաշվի առնել ոչ միայն այն պաշտպանելու հմտությունները, այլև աշխատանքի կատարողական ցուցանիշները,
- պորտֆոլիոն դիտարկվել է որպես կրթության խթանման գործոն հատկապես ճարտարապետության և դիզայնի մասնագիտությունների համար:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտությունների արդյունքները ներդրվել են Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում: Դրանք կարող են կիրառվել տեխնիկական համալսարանների կառավարման գործընթացներում, ինչպես նաև՝ օգտակար լինել բարձրագույն կրթության ոլորտի օրենսդրական բարեփոխումներ իրականացնելիս:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Աշխատանքի հիմնական արդյունքները զեկուցվել են.

- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դոկտորանտների և ասպիրանտների գիտաժողովում՝ 2009թ., Ջերմուկ,
- «Կրթության, գիտության և արտադրության ինտեգրումը որպես տնտեսական աճի ապահովման ռազմավարական ուղղություն» միջազգային գիտաժողովում՝ 2010թ., Երևան,
- «Ճարտարապետական կրթությունը ժամանակակից աշխարհում՝ հիմնահարցեր և

հեռանկարներ» միջազգային գիտաժողովում՝ 2011թ., Ալմա-Աթա, Ղազախստան,

- «Ինֆորմատիկայի հիմնախնդիրները կրթության, կառավարման և տեխնիկայի բնագավառներում» միջազգային գիտաժողովում՝ 2011թ., Պենզա, Ռուսաստանի Դաշնություն,
- «Արդյունավետ շինարարական կոնստրուկցիաներ. տեսություն և պրակտիկա» միջազգային գիտաժողովում՝ 2011թ., Պենզա, Ռուսաստանի Դաշնություն,
- «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» միջազգային գիտաժողովում՝ 2012թ., Չեստոխովո, Լեհաստան,
- «Կրթության որակի բարձրացման ուղիները Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում» գիտագործնական կոնֆերանսում՝ 2013թ., Ծաղկաձոր:

Ատենախոսության դրույթները հրապարակվել են թվով 10 հիմնական գիտական աշխատանքներում:

Ատենախոսության ծավալն և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 138 (առանց հավելվածների) մեքենագիր էջի վրա:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **«Ներածություն»** բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են ատենախոսության նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտն ու առարկան, ներկայացվել են ատենախոսության տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական ներույթները և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Որակի ապահովման հիմնախնդիրները Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում» գլխում ներկայացվել է բարձրագույն կրթական համակարգի զարգացման և կատարելագործման անհրաժեշտությունը որպես երկրի տնտեսական աճի ապահովման գրավական, դիտարկվել են «կրթական համակարգի ծառայությունների որակ» հասկացության մեկնաբանությունները և գնահատման սկզբունքները, ուսումնասիրվել է որակի գնահատման միջազգային փորձը և ներկայացվել են ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրները:

Արդի կրթությունը բարդ համակարգ է, որն ընդգրկում է մարդկային կապիտալի ձևավորման, զարգացման, գիտելիքների, հմտությունների ձեռքբերման և հաղորդման, անցյալի փորձի ընկալման ու կիրառման գործընթացների ամբողջությունը: Կրթությունը դարձել է այն գործիքը և միջոցը, որն ավելացնում և բազմապատկում է մարդկային կապիտալը, ինչն ազգային հարստության կարևոր բաղկացուցիչն է: Մարդկային ռեսուրսներն ի տարբերություն չվերականգնվող բնական ռեսուրսների, ունեն ոչ միայն վերարտադրվելու, այլ նաև ընդլայնվելու հատկություն, որով և ապահովվում է հասարակության ընդլայնված վերարտադրությունը: Միայն գիտելիքի և կրթության հիման վրա կառուցված հասարակությունն է ի վիճակի լուծելու մարդկության առջև կանգնած սոցիալ-տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական և մյուս հիմնախնդիրները: Ուստի, ամենևին էլ պատահական չէ, որ աշխարհի գրեթե բոլոր

երկրները հսկայական միջոցներ և ջանքեր են հատկացնում կրթված և գրագետ հասարակություն ունենալու համար: Այդպիսով, բարձր որակավորում ունեցող մասնագետների միջոցով կարելի է համաշխարհային շուկայում հասնել մրցունակ ապրանքների և ծառայությունների թողարկման (մատուցման) և հարաբերական առավելությունների: Տնտեսության, և մասնավորապես, արտադրության զարգացման գործընթացը պահանջում է աշխատուժի, այդ թվում զբաղվածների կրթական մակարդակի անընդհատ բարձրացում: Այդ առումով, ներկայումս բոլոր մակարդակների մասնագետների պատրաստումը չի սահմանափակվում միայն դպրոցի, մասնագիտական միջնակարգ ուսումնական հաստատության կամ բուհի ուսումնառության ժամանակահատվածով, այլ շարունակվում է ամբողջ արտադրական գործունեության ընթացքում, վերածվելով փաստացի անընդհատ գործընթացի: Մասնագետների շրջանում ընդունված է այն տեսակետը, որ մարդը չի կարող արդյունավետ կիրառել իր գիտելիքները և ունակությունները, եթե փոփոխությունները նրա մոտ առաջացնում են հոգեբանական անհարմարավետություն: Առավել լավ թեկնածուներ հանդիսանում են նրանք, որոնք հոգեպես պատրաստ են նորամուծություններին և դրանց վերաբերում են որպես բնական գործընթաց:

Հայտնի է, որ անհատի հիմնական հատկանիշները ձևավորվում են հատկապես երկուսից մինչև տասը տարեկան ժամանակահատվածում. այդ ընթացքում զարգանում է նրա ստեղծագործական միտքը, դրվում է ունակությունների կայուն զարգացման և կատարելագործման հիմքը: Այդ պատճառով, մասնագետներից շատերի կարծիքով, նախապատրաստական համակարգի կատարելագործման մեջ առաջնահերթ քայլերից է կրթական և դաստիարակչական հիմնախնդիրների լուծումը: Ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր երեխայի դաստիարակման ստեղծագործական և անհատական մոտեցմանը, կարելի է զգալիորեն լավացնել ազգային մարդկային ռեսուրսների որակը, որը հետագայում իր անմիջական ազդեցությունը կունենա երկրի տնտեսության գործունեության բարելավման վրա:

Ունակությունների ժառանգությունը կարելի է դասել որպես երեխայի մարդկային կապիտալի նախասկզբնական կուտակում, քանի որ նախկին սերունդները դրանց զարգացման համար կատարել են ներդրումներ, սակայն պահանջվում է անընդհատ լավացնել մարդկային կապիտալի ֆունկցիոնալ կառուցվածքը, հակառակ դեպքում անհատի մոտ ձևավորված ունակությունները որակապես կարժեզրկվեն:

Մարդկային ռեսուրսների զարգացումը կարող է իրականացվել՝

ա) պետական կրթական քաղաքականության մշակման և իրականացման ճանապարհով՝ հենվելով աշխատանքի շուկայի զարգացման միտումների անընդհատ ուսումնասիրման վրա,

բ) կադրերի պատրաստման գործընթացում արտադրական կառույցների անմիջական մասնակցության ճանապարհով, որը կարող է հանդես գալ ուսումնական հաստատությունների և գործատուների միջև համագործակցման տարբեր ձևերով:

Նման կարևոր փոխազդեցությունների գործընթացում պետության և տնտեսական սուբյեկտների դերը տարբեր է: Պետության դերը դրսևորվում է ոչ այնքան ուսումնական հաստատությունների և բիզնեսի միջև կապերի հաստատմամբ, որքան այդ հարաբերությունների կոորդինացմամբ: Չնայած բիզնեսը կարող է ազդել ուսումնական հաստատությունների նյութական բազայի կատարելագործման վրա, այնուամենայնիվ

այն չի կարող մշակել կրթության ռազմավարական ուղղվածությունը երկրում:[1]

Անհրաժեշտ է զարգացման գերակայությունների ճանապարհին տեսնել կրթության, գիտության և արտադրության ոլորտների ուղղակի կոոպերացիայի և փոխներգործության անհրաժեշտությունը: Կարելի է բերել հետևյալ փաստը, որ տնտեսապես զարգացած երկրների բուհերը հանդիսանում են ոչ միայն կրթական, այլև գիտական համակարգի մասը, քանի որ իրականացնում են մեծ ծավալի հիմնարար և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ: Ամբողջ աշխարհում անընդհատ աճում է կորպորացիաների դերը բարձրագույն կրթության համակարգի ֆինանսավորման գործում: Նման ֆինանսավորումն արտահայտվում է այնպիսի ձևերով, ինչպիսիք են՝ լավագույն ուսանողներին լրացուցիչ կրթաթոշակի տրամադրումը, համալսարանների գործունեության սոցիալական ծախսերի հոգումը, առանձին բնույթի հետազոտությունների ֆինանսավորումը, ինչպես նաև բազմապիսի սարքավորումների և տեխնիկայի մատակարարումը և ծրագրային ապահովումը: Վերլուծելով նման փոխազդեցության գործընթացը, անհրաժեշտ է ընդգծել բուհերի վրա ընկերությունների ազդեցության երկու միջոցների մասին.

ա) ուսումնական գործընթացի նկատմամբ հսկողության ուժեղացում,

բ) ուսումնական գործընթացի կանոնավորում կամ ճշգրտում:

Ուսումնական գործընթացի վրա ձեռնարկության կողմից հսկողություն սահմանելու ձգտումն իր տրամաբանական շարունակությունն է գտնում ընկերության կողմից ընտրված ցածր կուրսերի ուսանողների ուսումնական ծրագրերի համատեղ մշակման մեջ: Նման փոխհամագործակցության գործընթացում պետք է նախատեսել դասավանդող կադրերի փոխանակման հնարավորություն: Հայտնի է, որ կան որոշ բնագավառներ, որոնցում առանձին ընկերություններ զգալի չափով գերազանցում են բուհերի հնարավորությունները (օրինակ համակարգիչների հետ կապված ողջ ոլորտը): Նշենք, որ Հայաստանում այս գործընթացը մասամբ կիրառվում է ՃՇՀԱՀ-ում:

Յուրաքանչյուր երկրում կրթության զարգացումը բնութագրվում է ցուցանիշների համակարգի միջոցով, որոնց շարքում կարևոր տեղ է զբաղեցնում պետության կողմից կատարված ծախսերի բաժինը ՀՆԱ-ում և կառավարության կողմից կատարված ընդհանուր ծախսերում: Այս ցուցանիշի միջոցով են հիմնականում կատարվում կրթության ոլորտի գնահատման միջերկրային համեմատությունները: Միջերկրային համեմատությունների համար վերցվում է կրթության համար կատարված պետական ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի և կառավարության կատարած ընդհանուր ծախսերի նկատմամբ ցուցանիշը (տոկոսային արտահայտությամբ):

Կրթական համակարգում, այդ թվում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող գործընթացները հանդիսանում են «ծառայություններ» հասկացության անբաժանելի մասը: Կրթական համակարգի ծառայությունների որակի մասին գիտեն բոլորը, սակայն յուրաքանչյուրը, ելնելով իր մտահորիզոնի մակարդակից և աշխարհայացքից, այն ընկալում է յուրովի: «Կրթական համակարգի ծառայությունների որակ» հասկացության նկարագրված յուրաքանչյուր մոտեցում ունի իր թերություններն ու առավելությունները՝ այս կամ այն չափով համապատասխանելով որևէ ժամանակաշրջանի կամ ձևավորված ազգային ավանդույթների:

Ատենախոսությունում, դիտարկելով տարբեր հեղինակների կողմից «որակ»

[1] Марцикевич В.И., Тенденция развития и роль сферы образования: экономический и социальный аспекты, Институт МЭМО, М., 1994г., 228 с.

հասկացության մեկնաբանությունները, առաջարկվում է նրա վերլուծության հիմքում տարանջատել երեք ուղղություն.[2]

- օբյեկտիվ,
- ռելատիվ [հարաբերական],
- զարգացման:

«Որակ» հասկացության վերլուծության հիմքում դրված օբյեկտիվ ուղղությունը ենթադրում է որակի գնահատման բաղադրիչների չափման հնարավորություն: Այդպիսով, մասնավորապես, կարելի է համեմատել տարբեր ուսումնական հաստատությունների որակական ցուցանիշները:[3] Այս մոտեցումը բարձրագույն ուսումնական հաստատությունների համար հնարավորություն է ստեղծում օգտագործել վերլուծության «Մուտք-ելք» մեխանիզմը, որտեղ որպես մուտքային ցուցանիշներ կարող են համարվել պրոֆեսորադասախոսական կազմի բնութագիրը, լաբորատոր ու լսարանային ֆոնդի հագեցվածության մակարդակը, դիմորդների որակական գնահատականը, իսկ ելքային ցուցանիշներ՝ շրջանավարտների աշխատանքի տեղավորման գործընթացի գնահատականը, ուսանողների առաջադիմությունը, նրանց մասնակցությունը գիտահետազոտական աշխատանքներում և այլն:

«Որակ» հասկացության վերլուծության հիմքում դրված ռելատիվ ուղղությունը ենթադրում է ժխտման սկզբունքի կիրառումը: Այսինքն՝ որակը համարվում է ապահովված, եթե բացակայում է տվյալ գործառույթի համար սահմանված բացասական համարվող բաղադրիչների կազմը, կամ համեմատության առումով՝ դրա մասը: Այս ուղղությունը նպատակահարմար է կիրառել որևէ նպատակի հասնելու համար մարդկային և այլ ռեսուրսների որակական գնահատական ստանալու, մասնավորապես որպես վերջնական նպատակի՝ շուկայում մրցունակ շրջանավարտների պատրաստման համար:

«Որակ» հասկացության վերլուծության հիմքում դրված զարգացման ուղղությունը հիմնականում կիրառվում է որակի ոչ թե արտաքին, այլ ներքին գնահատման համար: Այս ուղղության կիրառումը կարևոր դեր կարող է ունենալ բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, երբ ի տարբերություն նախորդների, որոնք կոչված էին վերլուծելու կազմակերպության նախկին փորձը, հնարավորություն է ստեղծվում ներկա ժամանակահատվածում և մոտ ապագայում գնահատել ուսումնական գործընթացների բարելավման ուղիները: Ուսումնական գործառույթի որակի գնահատականը կազմելիս անհրաժեշտ է դիտարկել ուսումնական գործընթացի, քննությունների և ստուգարքների անցկացման, ֆինանսական աղբյուրների կայունության, դիմորդների պատրաստվածության (բուհի կազմում ավագ դպրոցի առկայության դեպքում) բաղադրիչները:[4] Մեր կարծիքով այս կազմում անհրաժեշտ է ավելացնել հետազոտական աշխատանքներում պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցության, լաբորատորիաների ու լսարանների արդիականացման, գրադարանային ֆոնդի համալրման բաղադրիչները:

Որակը կարող է տարբեր նշանակություններ ստանալ՝ կախված բարձրագույն կրթության շահագրգիռ կողմերի շահերից, օգտագործման ձևից՝ առաքելություններ,

---

[2] Barnet R., Improving higher education: total quality care, SRHE and Open University Press, 1992, 240 p.

[3] Մարկոսյան Ա.Խ., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Կրթական համակարգը որպես տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, 2013 թ., N 6 (38), էջ՝ 107-139:

[4] Jacobsson P., A Plea for more consistent definition of quality in education and research, Quality and communication for improvement: proceedings 12th European AIR Forum, University Claude Bernard Ecole Normale Supyrieure Lyon, France, September 9-12, 1990, Enschede: EAIR, a European Higher Education Society, Utrecht: Lemma. pp. 59-84.

նպատակներ և այլն, ուսումնագիտական աշխարհում ձևավորված բնութագրիչներից, բարձրագույն կրթության իրականացման պատմական ժամանակաշրջանից:

Բարձրագույն կրթության ոլորտում որակի գնահատման միջազգային փորձի ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ՀՀ համալսարաններում որակի ապահովման արտաքին և ներքին համակարգերի ձևավորման համար:

Որակի գնահատման հիմնական գործոններով է պայմանավորվում բուհի հաջողությունը կրթության որակի կառավարման արդյունավետ համակարգերի մշակման ու ներդրման գործընթացում և երկարաժամկետ հաջողությունները աշխատանքի և կրթական ծառայությունների շուկայում:

Բարձրագույն կրթության ոլորտում կրթական գործունեության արդյունքների լավագույն ցուցանիշը բուհի շրջանավարտի գիտելիքների, հմտությունների և կարողությունների որակն է: Այստեղ արդյունքի կարելի է հասնել միայն բարձրորակ կրթական գործընթացի պայմաններում, որն ապահովվում է մի կողմից կրթական գործընթացի բովանդակությամբ, մյուս կողմից՝ բուհի նյութատեխնիկական, տեղեկատվական և կադրային ռեսուրսներով հագեցվածությամբ: Ընդհանուր առմամբ, կրթության որակի կառավարման համակարգը կարելի է դիտարկել որպես մոդել, որը հիմնվում է տարբեր գործառութային հնարավորություններով փոխկապակցված և փոխազդող համակարգերի վրա, որոնք արտացոլում են ուսումնական գործընթացի բաղադրատարրերի առանձնահատկությունները (գործընթացն ապահովող ռեսուրսները՝ մարդկային, նյութական, տեղեկատվական, ֆինանսական, կրթության վրա ազդող արտաքին և ներքին գործոնները):[5]

Ատենախոսության երկրորդ՝ «Բարձրագույն ճարտարապետաշինարարական ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հնարավորությունների բարելավման հիմնական խնդիրները» գլխում ներկայացվել են բարձրագույն ճարտարապետաշինարարական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստման հիմնախնդիրները, արժևորվել է ամբիոնների դերը որպես ինժեներաշինարարական կրթության կայուն զարգացման գործոն, դիտարկվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին և արտաքին ապահովման, աուդիտի կազմակերպման և գնահատման հիմնախնդիրները:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) ստեղծման անհրաժեշտությունը հիմնավորվում է որպես գլոբալիզացիայի ընդհանուր գործընթացի մի մաս, քանի որ յուրաքանչյուր երկրի տնտեսություն պահանջում է գիտելիքի, կադրերի և նորույթների շուկայի ներուժի ազատություն և ինտերնացիոնալիզացիա, ինչպես նաև կրթական ոլորտում ներդրումների իրականացում:[6]

Ներկայումս ՃՇՀԱՀ-ն նախապատրաստվում է Եվրոպական չափանիշներին համապատասխան բուհերի պետական հավատարմագրման անցկացմանը: Այդ նպատակով օգտագործվում է հատուկ մշակված ձևաչափ, որը բաղկացած է 10 ճյուղերից (նկ. 1): Ձևաչափի ճյուղերը համապատասխանում են բարձրագույն կրթության Եվրոպական չափանիշներին և Միջազգային ստանդարտացման կազմակերպության սերիայի ստանդարտներին:[7]

---

[5] Բաղալյան Մ., Կրթության որակի կառավարման համակարգը որոշող գործոնները բուհերում, Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները, Գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ, Երևան, 2012 թ., էջ՝ 399-405:

[6] Болонский процесс и его значение для России, Интеграция высшего образования в Европе, М: РЭЦЕП, 2005 г., 65 с.

[7] ИСО 9000:2000 "Системы менеджмента качества - Основные положения и словарь", ISO 9000:2005.

Բուհի ինստիտուցիոնալ հնարավորությունների ինքնավերլուծության ճյուղերից յուրաքանչյուրում նշվում են՝ գործունեության հիմնական ուղղությունը, նպատակներն ու խնդիրները, բնութագրող հիմնական չափանիշները, անհրաժեշտ ուսումնասիրությունների հիմքերը (դրույթները, փաստաթղթերը և այլն), արդյունքների ստուգման հաճախականության, բարելավման ուղիների հիմնավորումները, ընդհանուր եզրակացություններն ու վերլուծության արդյունքները: Չնաչափն ունի ևս մեկ կարևոր հատկություն. վերջինիս օգնությամբ ցանկացած ժամանակ կարելի է անցկացնել բուհի աշխատանքի ինքնավերլուծություն, բացահայտել համակարգի «թույլ» կողմերը, սահմանել առաջիկա խնդիրները, անհրաժեշտ քայլեր ձեռնարկել դրանց լուծման համար, բարելավել կրթության որակը:



Նկ. 1. Համալսարանի ինստիտուցիոնալ հնարավորությունների ինքնավերլուծության ճյուղերը[8]

Բարձրագույն կրթությամբ որակյալ ինժեներաշինարարական կադրեր պատրաստելու գործընթացում կարևոր դեր ունի բուհի պրոֆեսորադասախոսական կազմի համար շարունակական կրթության ապահովումը, որն իր մեջ պետք է ներառի վերապատրաստման պարտադիր դասընթացների կազմակերպումը: Միայն գրագետ, իր գիտելիքներն անընդհատ համալրող դասախոսն է ի վիճակի XXI դարում՝ գիտատեխնիկական առաջընթացի խելահեղ արագացումների պայմաններում, ապահովել դասավանդման անհրաժեշտ մակարդակ: Այս խնդիրը լուծելու համար, որպես անհրաժեշտ պայման պետք է բարեփոխել դասախոսի աշխատավարձի ձևավորման համակարգը, այն անմիջականորեն կախվածության մեջ դնելով ոչ միայն յուրաքանչյուրի անհատական ցուցանիշներից, այլ նաև այն ամբիոնի վարկանիշից, որտեղ աշխատում է տվյալ անձը: Ամբիոնի կառավարման գործընթացն ունի բարդ, բազմաբաղադրիչ կառուցվածք, որտեղ պայմանականորեն կարող ենք ընդունել գործառույթների հետևյալ համամասնությունները. ուսումնական՝ 50%, մեթոդական՝ 25%, հետազոտական՝ 15%, կազմակերպչական՝ 5%, դաստիարակչական՝ 5%: Դասախոսների վերապատրաստման դասընթացների պարբերաբար իրականացումը, ինչպես նաև դասալսումների կազմակերպումը և քննարկումը կարևոր նշանակություն ունեն նրանց աշխատանքի գնահատման և դասախոսի վարկանիշի ձևավորման

[8] Маркосян А.Х., Кошкарян Г.Н., Иванян Г.А., Проблемы улучшения институциональных возможностей высших учебных заведений, Материалы международной научно-практической конференции "Архитектурное образование в современном мире: проблемы и перспективы", Алматы: КазНТУ, 2011 г., с.163-167.

գործընթացում: Ամբիոնի վարկանիշի ձևավորման վրա կարևոր ազդեցություն ունի անցկացվող գիտական և գիտամեթոդական սեմինարների պարբերաբար կազմակերպումը, աշխատակիցների կողմից մենագրությունների, դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, այլ օժանդակ գրականության մշակումը և տպագրության երաշխավորումը, ավարտական աշխատանքների միջազգային մրցույթներին և ցուցահանդեսներին մասնակցությունը: Դիմորդների շրջանում մասնագիտական կողմնորոշման և գովազդի արդյունավետ կազմակերպումը ուսանողական համակազմի ձևավորման գլխավոր երաշխիքն է:

Համագործակցությունը աշխատաշուկայի հետ ամբիոնների մեկ այլ կարևոր գործառույթն է: Բուհի ադմինիստրացիայի օժանդակությամբ, մասնագիտացված կազմակերպություններում անհրաժեշտ է ընտրել ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացման վայրերը: Սա չափազանց կարևոր գործառույթ է, և ի տարբերություն տեսական դասընթացների, Հայաստանում երբեք բավարար մակարդակով կազմակերպված չի եղել: Աշխատաշուկայի հետ համագործակցության արդյունքում կարող են լուծվել շրջանավարտներին աշխատանքի տեղավորման խնդիրները: Քայլեր պետք է ձեռնարկվեն նաև կազմակերպությունների պատվերով մասնագետների պատրաստման գործընթացները ընդլայնելու ուղղությամբ:

Երիտասարդ գիտնականների և դասախոսների ներհոսքի նվազումը, իսկ առանձին դեպքերում և մասնագիտություններում նրանց բացակայությունը, ծերացող կրթական ներուժը և ուսումնակրթական ոլորտում վերջին տարիներին նվազող ոչ գրավիչ աշխատավարձները լուրջ սպառնալիք են դարձել ոչ միայն զարգացող և նորանկախ երկրների, մասնավորապես ՀՀ-ի, այլև զարգացած այնպիսի երկրների համար, որոնք միշտ էլ աչքի են ընկել ուսումնակրթական համակարգերի բարձր մակարդակով և դրանց փորձը օրինակ է հանդիսացել աշխարհի մյուս երկրների համար: Խոսքն այնպիսի երկրների մասին է, ինչպիսիք են ԱՄՆ-ն, Գերմանիան և Ճապոնիան: Ավելին, իմանալով այս կամ այլ երկրում դասախոսների վարձատրության չափը կարելի է պատկերացում կազմել տվյալ երկրի զարգացման վերաբերյալ:

Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում արտաքին կարևոր գործոններից է Որակավորումների Հայաստանի շրջանակը (ANQF): Տարբեր երկրներում այն ընդգրկված է լինում պետությունների ազգային կամ տարածքային օրենսդրություններում: Բոլոնիայի գործընթացի շնորհիվ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի (EHEA) գրեթե բոլոր երկրները մշակել են որակի արտաքին գնահատման ազգային շրջանակ: Որակի ներքին ապահովումն առավել ուղղված է որակի շարունակական բարելավմանը, իսկ որակի արտաքին գնահատումը՝ վերջնական արդյունքներին՝ հաշվետվությանը, ինչն էլ համարվում է հավատարմագրման կարևոր գործոն:

Չնայած որակի արտաքին գնահատման ազգային և տարածքային չափանիշները կարող են տարբերություններ ունենալ, այնուամենայնիվ «Եվրոպական չափանիշներ (ստանդարտներ) և ուղենիշներ» (ESG) ծրագրի կողմից Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի համար մշակվել են օրինակելի ուղենիշներ և սկզբունքներ:[9]

Բարձրագույն կրթության հաստատությունների Եվրոպական ասոցիացիա (EURASHE) և Եվրոպական չափանիշներ (ստանդարտներ) և ուղենիշներ (ESG)

[9] Bollaert L., Practical guide for implementing internal quality assurance processes in higher education institutions, Bucharest (Romania), 24-25 October 2013, EURASHE, 53 p.

ծրագրերի շրջանակներում պարզ դարձավ, որ միայն որակի արտաքին գնահատման միջոցով իրականացվող գործառույթները չեն կարող կրթության բավարար որակ ապահովել: Որակի ապահովումը կարող է հաջողություն ունենալ միայն այն դեպքերում, երբ դրանք կապված են կազմակերպությունում ձևավորված ավանդույթների, մշակույթի, հիմնարար արժեքների և սկզբունքների, տեսլականի և առաքելության հետ: Որակի արտաքին ապահովման գործընթացը պետք է սկսել որակի ներքին ապահովումից:

Որակի ներքին և արտաքին ապահովման համատեքստում առանձնանում է «**աուդիտ**» հասկացությունը:

Ատենախոսությունում դիտարկված են այդ տերմինի ամենագործածական թարգմանությունները՝ տրված Ռ. Հայեսի, Լ. Լամմենսի, Ս. Կարապետրովիչի, Վ. Վիլբոռնի և այլոց կողմից: Ընդհանրացված տեսքով սահմանվում է, որ. «Աուդիտը տնտեսական գործընթացների արդյունքների վերաբերյալ վկայությունների ձեռքբերման ու գնահատման համակարգված գործընթաց է, որի նպատակն է հաստատել արդյունքների և հաստատված չափանիշների միջև համապատասխանություն և հանդիսանում է որակի ապահովման ջանքերի արդյունավետության գնահատման գործիք»:[10]

Արտաքին աուդիտն իրականացվում է տվյալ կազմակերպության հետ առնչություն չունեցող անձի կամ կազմակերպության կողմից՝ օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքերում:

Ներքին աուդիտը կառավարչական պահանջները բավարարելու գործիք է. «ներքին աուդիտը անկախ, վստահելի մի գործընթաց է, որը կոչված է կազմակերպության գործունեությունը վերլուծելու, առավելություններն ու թերությունները բացահայտելու, կառավարումը բարելավելու և նոր արժեքներ ստեղծելու համար: Այն կազմակերպությանը հնարավորություն է ընձեռում հասնելու իր նպատակներին՝ ստեղծելով համակարգված մոտեցում ռիսկային կառավարման, վերահսկողության գործընթացները գնահատելու և բարելավելու համար»:[11]

Այսպիսով, որակը կենտրոնացված է մի եռանկյունում, որի անկյուններն են ուսանողները, ուսուցանող կազմը և ուսումնական միջավայրը: Բուհի ներքին և արտաքին միջավայրերի և դրանցում գտնվող շահեկիցների փոխկապակցվածությունը ներկայացված է նկ. 2-ում:

Վերոհիշյալ նկարում եռանկյունու անկյուններում ներկայացված են բուհի ներքին միջավայրն ու այդ միջավայրում գտնվող շահեկիցները, իսկ եռանկյունուց դուրս՝ բուհի արտաքին միջավայրը և այդ միջավայրում գտնվող շահեկիցները:

[10] Hayes, R., Dassen, R., Schilder, A. & Wallage, P., Principles of Auditing, on introduction to International Standards on Auditing, Pearson Education Essex England, 2005, p. 11.

[11] IIA, 2012, https://na.theiia.org/standards-guidance/pages/standards-and-guidance-ippf.aspx

Նկ. 2. Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության միջավայրը և արտաքին ազդեցության տիրույթը[12]

Մեր կարծիքով, բուհի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահեկիցների կազմը, ինչպես նաև նրանց փոխկապակցվածության սխեման կարելի է ներկայացնել ավելի ընդգրկուն: Բուհի ներքին և արտաքին միջավայրերի և դրանցում գտնվող շահեկիցների փոխկապակցվածության առավել ընդգրկուն տարբերակը ներկայացված է նկ. 3-ում:



Նկ. 3. Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության միջավայրը և արտաքին ազդեցության տիրույթը[13]

Նկ. 3-ում ներկայացրած որակի ապահովման **ներքին գործոններն են**. 1 - պրոֆեսորադասախոսական կազմ, 2 - սովորողներ, 3 - գիտելիքների փոխանցման մեթոդաբանություն, 4 – գիտելիքների հիմնարարության մակարդակի ապահովում, 5 - նյութատեխնիկական ապահովածություն (լաբորատորիաներ, լսարաններ), 6 - համալսարանի կառավարման արդյունավետության մակարդակի ապահովում, 7 - ուսման առավել բարձր մակարդակներում ուսանողի ստացված գիտելիքների հենքով կրթության շարունակականության ապահովում, 8 - սովորողների մնացորդային գիտելիքների գնահատման մեթոդաբանություն:

Որակի ապահովման **արտաքին գործոններն են**. 9 - ծնողներ, 10 - ակադեմիական գործընկերներ, 11 - ոչ ակադեմիական գործընկերներ, 12 - օրենսդրական դաշտ, 13 - հանրակրթություն, 14 - պետական վերահսկողություն, 15 - հասարակության առջև

[12] Bollaert L., Practical guide for implementing internal quality assurance processes in higher education institutions, Bucharest (Romania), 24-25 October 2013, EURASHE, 53 p.

[13] Մարկոսյան Ա.Խ., Սարգսյան Հ.Լ., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Որակի ապահովման ներքին համակարգը ճարտարապետաշինարարական բարձրագույն ուսումնական հաստատություններում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2013թ., 248 էջ:

պատասխանատվություն, 16 - աշխատաշուկայի պահանջարկ, 17 - երկրի սոցիալ տնտեսական վիճակ, 18 - առարկայական փորձագետներ, 19 - կրթության կազմակերպման փորձագետներ:

Երբեմն դժվար է առանձնացնել որակի ներքին և արտաքին շահագրգիռ կողմերին, սակայն ակնհայտ է, որ նրանց հանդիպման կետը միանշանակ շրջանավարտներն են: Նկ. 3-ում շրջանավարտները ներկայացված են որպես ներքին և արտաքին միջավայրերի բաժանարար: Ինչպես երևում է նկ. 3-ից, բուհի ներքին միջավայրի գործոնները կրթության որակի վրա կարող են ունենալ նաև արտաքին ազդեցություն: Բուհի գործունեության արդյունավետության բարձրացման համար կարևոր է որակի ապահովման ներքին համակարգի ստեղծումը: Այն սովորաբար դուրս է դրվում կազմակերպության ակադեմիական կամ վարչական համակարգից, որպեսզի կարողանա անկախ և անաչառ մնալ և արդյունավետ հետևել կազմակերպությունում տեղի ունեցող զարգացումներին: Միևնույն ժամանակ այն պետք է կապված լինի կազմակերպության հետ և անմիջապես զեկուցի աուդիտի արդյունքների մասին բուհի ղեկավարությանը:

Սովորաբար որակի ապահովման մարմինը, գործում է համագործակցելով բոլոր շահագրգիռ կողմերի հետ, որտեղ կարող են ընդգրկվել որակի արտաքին ապահովման մասնագետներ: Այս մեխանիզմը չի կարող արդյունավետ աշխատել փոքր համալսարաններում, քանի որ այնտեղ առկա բազմաթիվ խորհուրդները կստեղծեն այնպիսի բյուրոկրատական համակարգ, որն արագորեն կխաթարվի: Համալսարանում առաջարկվում է որակի ապահովման կենտրոնի տեղը բուհի կառավարման կառուցվածքում սահմանել անմիջականորեն գիտխորհրդի ենթակայության ներքո, ինչը կնպաստի դրա անկախ գործունեությանը (նկ. 4):



Նկ. 4 Որակի ապահովման մարմնի տեղը Համալսարանի կառուցվածքում[14]

[14] Մարկոսյան Ա.Խ., Սարգսյան Հ.Լ., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Որակի ապահովման ներքին համակարգը ճարտարապետաշինարարական բարձրագույն ուսումնական հաստատություններում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2013թ., 248 էջ:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի վեցերորդ մակարդակի ներդրման առանձնահատկությունները ճարտարապետաշինարարական մասնագիտությունների համար» գլխում ուսումնասիրվել են ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի վեցերորդ մակարդակում ճարտարապետաշինարարական մասնագիտությունների առջև ծագող հիմնախնդիրները, տրվել են վերոնշյալ մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման մեխանիզմները, ներկայացվել են ՀՀ բարձրագույն կրթության որակի բարձրացման հիմնական ուղիները, բարձրագույն ճարտարապետաշինարարական ուսումնական հաստատության ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստման հիմնախնդիրները, հիմնավորվել է ճարտարապետության և դիզայնի մասնագիտությամբ շրջանավարտների համար պորտֆոլիոյի ստեղծման անհրաժեշտությունը, որպես նշված մասնագիտությունների կրթության խթանման գործոն:

Եվրոպական որակավորումների շրջանակը (ընդունվել է 2008թ.-ի ապրիլի 23-ին) ի սկզբանե ուշադրությունը (ուսման տևողությունից, հաստատության տեսակից և այլն) տեղափոխում է այն խնդրի վրա, թե անձն իրականում կոնկրետ ինչ գիտի և ինչ է ի վիճակի անել: Եվրոպական որակավորումների շրջանակի նպատակն է նպաստել աշխատանքային շուկայի և բուհերի միջև ավելի ընդգրկուն կապերի հաստատմանը, տարբեր երկրներում և կրթական համակարգերում հեշտացնել ուսանողների փոխանակման և որակավորումների օգտագործման գործընթացները:

ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակում բակալավրի որակավորում ստացող անձը պետք է ունենա կոնկրետ բնագավառի տեսական և գործնական խորը գիտելիքներ, պետք է կարողանա ստանձնել պատասխանատվություն մասնագիտական գործընթացների կազմակերպման և կառավարման համար, աշխատանքում դրսևորի ինքնուրույնություն, մասնակցի ռեսուրսների պլանավորման ու բաշխման գործընթացներին: ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակում՝ բակալավրի որակավորում ստացող անձի համար հմտությունների ու կարողությունների բնութագրիչներում, համապատասխանաբար տեղեկատվական տեխնոլոգիաների և լեզուների իմացության մասով Համալսարանի ուսանողների մակարդակը գնահատելու եղանակներից առանձնացնենք ուսանողի կողմից տվյալ ասպարեզում տրված ինքնագնահատականը և դասախոսի կողմից ուսանողի գնահատականը:

Համալսարանում պարբերաբար իրականացվում են կրթական ծրագրերի բարեփոխումներ: Ինչպես ինքնագնահատման, այնպես էլ կառուցվածքային և ծրագրային ինքնավերլուծության աշխատանքները (սկսած 2011թ.-ից) ցույց են տալիս, որ Համալսարանն, ի թիվս այլ ոլորտների, կարիք ունի արտաքին և ներքին իրավական ակտերի ընդունման միջոցով կանոնակարգելու կրթական ծրագրերի մշակման ու հաստատման, մշտադիտարկումների և ծրագրերի վերանայման հետ կապված գործընթացները: Ինչպես կրթական ծրագրի ընդունումը, այնպես էլ դրա բարեփոխումները ենթադրում են բարդ գործառույթների շղթա, ինչի պարագայում առանձնապես կարևորվում է շղթայի տարբեր օղակների համար համալսարանական ստորաբաժանումների միջև հստակ դերաբաշխումը և պատասխանատվությունների սահմանումը: Աղ. 1-ում ներկայացված են կրթական ծրագրերի վերանայման առանցքային պայմանները, դրանց վերանայման մեխանիզմներն ու պատասխանատու օղակները:

Աղյուսակ 1

Կրթական ծրագրերի վերանայման կառուցվածքային մոդելի առաջարկ

Կրթական ծրագրին ներկայացվող պահանջներ	Համապատասխանության որոշման մեթոդներ, գործողություններ և մեխանիզմներ	Պատասխանատու օղակներ
ՀՀ և արտերկրի աշխատաշուկայի պահանջներին բավարարում	Շուկայի կարիքների ուսումնասիրում և գնահատում	Կարիերայի կենտրոն
	Շրջանավարտների զբաղվածության ցուցանիշի վերլուծություն, այդ թվում՝ արտերկրում աշխատող /տեղեկատվական բազայի ստեղծում/	Կարիերայի կենտրոն, դեկանատներ
	Գործատուների կարծիքների ուսումնասիրում շրջանավարտների մասնագիտական որակների վերաբերյալ /հարցումների միջոցով/	Կարիերայի կենտրոն, դեկանատներ
Համապատասխանություն որակավորումների ազգային շրջանակին	Ծրագրի ելքային արդյունքների համեմատում որակավորումների շրջանակով սահմանված պահանջների հետ	Դեկանատներ, որակի ապահովման կենտրոն
	Որակավորման պետական կրթական չափորոշիչի համեմատում որակավորումների շրջանակով սահմանված պահանջների հետ	Դեկանատներ, որակի ապահովման կենտրոն
Ելքային արդյունքների համադրելիություն արտերկրի ճանաչված համալսարանների կամ միջազգայնորեն ընդունված փաստաթղթերի պահանջների հետ /դրանց առկայության դեպքում/	Կրթական ծրագրերի բենչմարքինգի իրականացում	Դեկանատներ, ամբիոններ, միջազգային կապերի դեպարտամենտ
	Ուսանողների շարժունակության ցուցանիշի վերլուծություն	Դեկանատներ, միջազգային կապերի դեպարտամենտ
	Կրթական ծրագրերի փոխադարձ ճանաչում	Դեկանատներ, միջազգային կապերի դեպարտամենտ
Ծրագրի ուսումնամեթոդական ապահովվածություն	Առարկայական ծրագրերի, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների առկայություն	Ամբիոններ, Գիտահետազոտական սեկտոր
Ծրագրի ռեսուրսային ապահովվածություն	Լսարանների, լաբորատորիաների, սարքավորումների, գույքի առկայություն	Գիտխորհուրդ, Ֆինանսավերլուծական և զարգացման բաժին
Ծրագրի կադրային ապահովվածություն	Համապատասխան որակավորման պրոֆեսորադասախոսական անձնակազմի առկայություն	Ամբիոններ

Նշենք, որ առաջարկվող մոտեցումները նախնական են և ընդհանրացված: Դրանք կարող են քննարկման առարկա դառնալ՝ առանձին գործոնների ավելի մանրամասնեցման և դրույթների հստակեցման առումով:

Ատենախոսությունում ներկայացված է մեր կողմից ուսումնասիրված արտերկրի մի շարք բուհերի «Ճարտարապետություն» մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրերը (Մոսկվայի ճարտարապետական ինստիտուտ, Կալիֆոռնիայի, Հարվարդի, Քեմբրիջի համալսարաններ, Լիոնի և Ստրասբուրգի ճարտարապետական դպրոցներ), ինչպես նաև Ճարտարապետների միջազգային միության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ հռչակագիրը ճարտարապետական կրթության մասին:[15] Կրթական հաստատությունների շրջանակից ավելի հանգամանալից ուսումնասիրվել են Մոսկվայի ճարտարապետական ինստիտուտի, Լիոնի և Ստրասբուրգի ճարտարապետական դպրոցների կրթական ծրագրերը, նկատի ունենալով, որ առաջին դեպքում առկա է նույն կրթական համակարգի ժառանգորդ լինելու գործոնը, իսկ Ֆրանսիայի բուհերի պարագայում՝ տասնամյակների համագործակցության և Համալսարանի «Ճարտարապետություն» մասնագիտության դիպլոմը Ֆրանսիայում պաշտոնապես ճանաչված լինելու գործոնը: Քանի որ նշված համալսարանների կրթական ծրագրերը կառուցվածքային առումով շոշափելիորեն տարբեր են, համեմատական վերլուծության նկատառումով առարկայական ծրագրերի խմբավորումը իրականացվել է՝ Համալսարանի կրթական ծրագրի կառուցվածքի հետ համադրելիության հնարավորություն ապահովելու նկատառումով, որի արդյունքում կարելի է եզրակացնել, որ Համալսարանի «Ճարտարապետություն» մասնագիտության կրթական ծրագրի վերանայման պարագայում կարող են քննարկման առարկա դառնալ հետևյալ մոտեցումները.

ա) վերանայել պրակտիկաների անցկացման սկզբունքը՝ ավելացնելով դրանց հատկացված ժամերը, կամ, ինչն ավելի ընդունելի է, խնդիրը կարգավորել արվեստանոցային սկզբունքով դասավանդման անցնելու ճանապարհով, ինչը թույլ կտա ուսանողների մոտ զարգացնել թիմային և գործնական աշխատանքների հմտությունները և կարողությունները,

բ) ավելացնել մշակույթի և ճարտարապետության պատմության դասաժամերը (դա կարող է իրականացվել կամ համապատասխան ժամերն ուղղակի ավելացնելով, կամ ի հաշիվ ֆիզիկական դաստիարակության, գեղեցիկ արվեստների կամ բնագիտական կրթամասի դասաժամերի):

Ճարտարապետների միջազգային միության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ հռչակագրի դրույթները կարելի է համարել օրինակելի, քանի որ դրանցում հստակորեն շարադրված են ինչպես ճարտարապետական հանրության առջև ծառացած՝ արդի և ապագայի մարտահրավերները, այնպես էլ դրանց դիմակայելուն միտված՝ ճարտարապետական կրթության նպատակները, ասպեկտները և կրթության ելքային արդյունքները (գիտելիքներ, հմտություններ, պրոֆեսիոնալ կարողություններ): Նշված գործոնը էապես դյուրացնում է «Ճարտարապետություն» մասնագիտության կրթական ծրագրերի վերանայման խնդիրները, քանի որ.

ա) ցանկացած ճարտարապետական դպրոց կարող է ինքնուրույն ընտրել ելքային արդյունքներին հասնելու ճանապարհը՝ հաշվի առնելով դպրոցի

[15] Хартия ЮНЕСКО и МЦА по архитектурному образованию, http://www.uia-architectes.org/image/PDF/CHARTES/CHART_RUS.pdf

առանձնահատկությունները և աշխատաշուկայի պահանջները,

բ) ելքային համարժեք արդյունքները թույլ կտան ցանկացած դպրոցի շրջանավարտի՝ իր տեղը գտնել միջազգային աշխատաշուկայում:

Հիմք ընդունելով նշված հռչակագրի դրույթները՝ ճարտարապետության ֆակուլտետում արդեն մշակվել է բակալավրիատի կրթական ծրագրի բարեփոխված կառուցվածքը, որը դեռևս լրացուցիչ քննարկումների կարիք ունի և նախատեսվում է առաջիկայում կիրառման մեջ դնել:

Մասնավորապես, մեր առաջարկությունների հիման վրա ծրագրի նոր կառուցվածքի կրթամասերը համապատասխանեցվում են վերոնշյալ հռչակագրի պահանջներին, մտցվել են ընտրովի առարկաների բաժիններ և ստեղծվել է հնարավորություն որոշ առարկաներ թիմային աշխատանքով՝ արվեստանոցային մոդելով դասավանդելու համար: Ներկայումս ընթացքի մեջ են հռչակագրով սահմանված ելքային արդյունքների և առարկայական ծրագրերի ավելի հանգամանալից համեմատությունների և վերլուծության աշխատանքները, որոնք իրականացվում են աղ. 2-ում ներկայացված ձևաչափի հիման վրա:

Աղյուսակ 2

Կրթական ծրագրի կրթամասերի և դասավանդվող առարկաների՝ շրջանավարտներին ներկայացվող ելքային արդյունքների հետ համեմատության առաջարկվող ձևաչափ

№	Կրթամասեր և դասավանդվող առարկաներ	Գիտելիքներ			Հմտություններ			Կարողություններ		
		Գ1	Գ2	Գ№	Հ1	Հ2	Հ№	Կ1	Կ2	Կ№
1.	**Հումանիտար կրթամաս**	-	-	-	-	-	-	-	-	-
1.1	-	-	-	-	-	-	-	-	-	-
1..	-	-	-	-	-	-	-	-	-	-
1.№	-	-	-	-	-	-	-	-	-	-
2	**Հիմնարար և բնագիտական կրթամաս**	-	-	-	-	-	-	-	-	-
2.1	-	-	-	-	-	-	-	-	-	-
2..	-	-	-	-	-	-	-	-	-	-
2. №	-	-	-	-	-	-	-	-	-	-
3	**Ընդհանուր մասնագիտական կրթամաս**	-	-	-	-	-	-	-	-	-
3.1	-	-	-	-	-	-	-	-	-	-
3..	-	-	-	-	-	-	-	-	-	-
3. №	-	-	-	-	-	-	-	-	-	-
4	**Մասնագիտական կրթամաս**	-	-	-	-	-	-	-	-	-
4.1	-	-	-	-	-	-	-	-	-	-
4..	-	-	-	-	-	-	-	-	-	-
4. №	-	-	-	-	-	-	-	-	-	-
5	**Պրակտիկաներ**	-	-	-	-	-	-	-	-	-
6	**Ավարտական աշխատանք**	-	-	-	-	-	-	-	-	-

Աղ. 2-ի ձախակողմյան հատվածում զետեղվում է կրթամասերի և դասավանդվող առարկաների ամբողջական կազմը, աջակողմյան հատվածում՝ հռչակագրով սահմանված ելքային արդյունքների պայմանական նշագրումներն ըստ գիտելիքների, հմտությունների և կարողությունների բաղադրիչների: Ձևաչափում, յուրաքանչյուր առարկայի տողում նշվում է, թե ելքային որ արդյունք(ներ)ի ապահովմանն է այն

միտված: Բոլոր առարկաների տողերը լրացնելուց հետո,

- եթե միևնույն ելքային արդյունքը «ծածկվում է» մի քանի առարկաներով, դա նշանակում է, որ դրանց մի մասն ավելորդ է կամ դրանք բովանդակային փոփոխությունների կարիք ունեն,
- եթե որևէ ելքային արդյունք չի «ծածկվում» որևէ առարկայով, դա նշանակում է, որ լրացուցիչ առարկայական ծրագիր մշակելու և ներդնելու անհրաժեշտություն կա,
- եթե որևէ առարկայական ծրագիր չի «ծածկում» առնվազն 1 ելքային արդյունք, դա նշանակում է, որ այդ առարկան անհրաժեշտ է հանել կրթական ծրագրից:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ որևէ առարկա կարող է ապահովել մեկից ավելի ելքային արդյունքներ, սակայն դա պետք է լինի ողջամիտ չափաքանակի սահմաններում և որոշ դեպքերում կարող է անհրաժեշտություն առաջանալ այդ առարկան բաժանել առանձին մասերի:

ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգում տարբեր մասնագիտությունների համար անհրաժեշտություն է առաջացել, հիմնվելով վերջնարդյունքների պահանջների վրա, վերանայելու ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը: Դա վերաբերում է նաև շինարարական մասնագիտություններին: Բոլոնիայի գործընթացով պայմանավորված բարեփոխումների առաջին տարիներին ՀՀ-ում հնարավոր եղավ լուծել մեծ թվով կազմակերպչական և իրավական խնդիրներ, սակայն, ըստ էության, բաց մնաց գլխավոր հարցերից մեկը. չհստակեցվեց այն սահմանը, որը տարանջատում է բակալավրիատը և մագիստրատուրան: Ստեղծված իրավիճակը խոչընդոտում է մագիստրատուրայի կայացմանը և, առաջին հերթին, դրա կարևորության ընկալմանը ուսանողների կողմից: Հաճախ տպավորություն է ստեղծվում, որ բակալավրիատում փորձ է արվում խտացված տեսքով դասավանդել դիպլոմավորված մասնագետի հնգամյա ծրագրային կուրսը, իսկ մագիստրատուրայում՝ խորացնել բակալավրիատում անցածը: Այդպիսի մոտեցումը հեռանկարային լինել չի կարող: Մյուս կողմից, օրենսդրական կարգավորման կարիք ունի աշխատաշուկայում բակալավրի կողմից իրականացվող որոշակի գործառույթների վրա սահմանափակում դնելու խնդիրը. այսինքն, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել այն գործառույթների ցանկը, որով անձը կարող է զբաղվել առնվազն մագիստրոսի որակավորում ունենալու դեպքում:[16]

ՀՀ ԿԳՆ-ում աշխատանքներ են տարվում մասնագիտությունների խոշորացման առումով, ինչը դարձել է օրվա հրամայական և հիմնվում է եվրոպական բարձրագույն կրթության առաջավոր փորձի վրա (նախատեսվում է խոշորացումն ավարտել 2014թ.-ին և այն կիրառության մեջ դնել 2015-2016 ուս. տարվանից):

ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից, մասնավորապես, առաջարկվում է ճարտարապետության և քաղաքաշինության ոլորտի բակալավրիատում ունենալ 2-3 մասնագիտություն: Մեծ հաշվով, դրանք ճարտարապետությունն ու շինարարությունն են: Նույնիսկ վերջին տարիներին կատարված մասնագիտությունների խոշորացումներից հետո, Համալսարանում դեռևս առկա է շինարարական թվով 5 մասնագիտություն: Մեր կարծիքով, բակալավրիատում այն պետք է փոխարինվի մեկով՝ "Շինարարություն": Որպես առաջին քայլ, ներկայումս գործող շինարարական թվով 5 մասնագիտությունների համար անհրաժեշտ է մշակել չորրորդ կուրսում թվով չորս

[16] Թոքմաջյան Հ.Վ., Բակալավրիատում շինարարական մասնագիտությունների խոշորացման գործընթացը որպես կրթության որակի բարձրացման գործոն, Կրթության որակի բարձրացման ուղիները Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, Գիտագործնական կոնֆերանսի թեզիսների ժողովածու, Երևան, 2013 թ., էջ՝ 27-29:

ընտրովի առարկայական բլոկներով մեկ միասնական ուսումնական պլան և առարկայական ծրագրեր, և դրանք որպես պիլոտային ծրագիր փորձարկել 2014-2015 ուսումնական տարվանից: Մշակման ընթացքում շեշտն անհրաժեշտ է դնել սովորողների ուսումնառության վերջնական արդյունքների վրա: Փորձնական ուսումնական պլանը և առարկայական ծրագրերն անհրաժեշտ է համեմատել եվրոպական և ԱՊՀ բուհերի համապատասխան մասնագիտություններով իրականացվող ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի հետ և վերլուծությունների արդյունքներից ելնելով՝ կատարել համապատասխան շտկումներ:

Մարդու զարգացման կրթական հայեցակարգն, ի թիվս կրթությունը բովանդակող միջոցների, այն է՝ գիտելիքների հաղորդում, կարողությունների ու հմտությունների մշակում, ներառում է նաև որակի գնահատումը: Մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներում առանձին մասով ներառված է ուսանողների գնահատումը:[17] Ըստ այդմ՝ ուսումնառության ակնկալվող արդյունքների գնահատումը ներառում է դասախոսների և ուսանողների համար հասանելի այնպիսի համակարգի կիրառում, որը հստակ սահմանված ընթացակարգերի միջոցով կապահովի գնահատման անաչառությունը, և, այդ պարագայում, ուսանողի գիտելիքների օբյեկտիվ գնահատումը կնպաստի կրթության որակի բարձրացմանը: Գնահատման համակարգում տարածված է նաև վարկանշումը (երկրների, բանկերի, ներդրումային հիմնադրամների, բուհերի և այլն):

Բուհերն այն ոլորտն են, որտեղ ստեղծվում է մարդկային կապիտալը, ուստի կարևոր է նրանց գործունեության գնահատման համակարգի ուսումնասիրությունը:[18] Ուսումնասիրվող հիմնախնդրի վերաբերյալ տարբեր մոտեցումների առկայությունը հնարավորություն է ընձեռում տարաբնույթ բուհերի համար սահմանել ավարտական ատեստացիայի արդյունքների առանձնահատկությունները: Բոլոնիայի գործընթացում ինտեգրվելու, միջազգային աշխատաշուկայում շրջանավարտների շարժունակության ապահովումն իրատեսական հիմքերի վրա դնելու նկատառումով անհրաժեշտություն էր առաջացել ավարտական աշխատանքների գնահատման այնպիսի համակարգի ներդրման, որը հնարավորինս կբացառեր սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունը, համադրելի կլիներ արտերկրում կիրառվող մոդելների հետ և ընդունելի կլիներ դասախոսների և ուսանողների համար:

Հիմնահարցի լուծման նպատակով մեր կողմից գնահատման համակարգում առաջարկվում է հայտանիշների հետևյալ պահանջների գործառնումը.

ա) չափորոշիչները չպետք է շատ լինեն՝ գնահատման գործընթացն անհարկի չբարդացնելու նկատառումով,

բ) դրանք պետք է հնարավորություն ընձեռեն գնահատելու ինչպես մտահաղացումը, դրա ներկայացման որակն ու ամբողջականությունը, այնպես էլ աշխատանքը պաշտպանելու ունակությունը,

գ) չափորոշիչները պետք է կիրառելի լինեն ինչպես առանձին շենքերի և համալիրների, այնպես էլ քաղաքաշինական բնույթի և պատմամշակութային ժառանգության պահպանության ուղղվածություն ունեցող նախագծերի համար,

դ) ուսանողների ցանկության դեպքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակած գնահատականները պետք է ազատ լինեն հրապարակման համար:

---

[17] Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. հունիսի 30-ի «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» թիվ 959-Ն որոշում, հավելված 2, ծրագրային ապահովման չափանիշների 4-րդ կետ:

[18] Գիտությունները ճշգրտում են վարկանիշը, օրակարգ, տնտեսական օրաթերթ, Երևան, 12.09.2012, N 109 (178), էջ՝6:

Առաջարկվում է ճարտարապետական մասնագիտության ավարտական աշխատանքները գնահատել հետևյալ 4 չափորոշիչների հիման վրա՝ այն հաշվարկով, որ դրանց առավելագույն արժեքների գումարը հավասարեցվի 20-ի.

- կառույցի կամ համալիրի ֆունկցիոնալ լուծումներ և կոնստրուկտիվ համակարգի ընտրություն (քաղաքաշինական լուծումներ և (կամ) միջավայրի հետ ներդաշնակություն) - առավելագույնը՝ 8 միավոր,
- ճարտարապետական հորինվածքի արտահայտչականությունը և գրաֆիկական ներկայացման մակարդակ (գաղափարի ընթեռնելիություն և մատուցման գեղագիտական որակ) - առավելագույնը՝ 6 միավոր,
- աշխատանքի կազմի համապատասխանությունը առաջադրանքին, թեմայի ամբողջական ու լիարժեք բացահայտում գրաֆիկական մասում և բացատրագրում - առավելագույնը՝ 4 միավոր,
- աշխատանքը հիմնավորելու և պաշտպանելու հմտություն - առավելագույնը՝ 2 միավոր:

Առաջարկվում է համարժեք մոդել կիրառել նաև կուրսային աշխատանքների գնահատման համար:

Ճարտարապետության և դիզայնի մասնագիտությունների համար նպատակահարմար ենք համարում որպես գործիք կիրառել «պորտֆոլիո» հասկացությունը:[19] Պորտֆոլիոն անհատի կենսագրական տվյալների, ժամանակի ընթացքում կատարած լավագույն աշխատանքների, փաստաթղթերի, անհատի ձեռքբերումների հավաքածուն է, ինչը հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմել անձի, նրա աշխատանքային գործունեության, ինքնագնահատականի, գիտական աշխատանքների և այլ տվյալների մասին: Բոլոնիայի գործընթացը, որի նպատակներից մեկն է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) նպաստել եվրոպական բարձրագույն կրթության գրավչությանն ու մրցունակությանը, նպաստում է պորտֆոլիոյի ներդրման գաղափարին: Այն կնպաստի ուսանողների և մասնագետների շարժունակության զարգացմանը, ինչպես արտերկրում ուսումը շարունակելու, այնպես էլ աշխատանք գտնելու հարցում:

Յուրաքանչյուրի համար պորտֆոլիոյի բովանդակությունը համապատասխանաբար փոխվում է: Այն փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են մեկ մասնագիտության տեր մարդու համար, կարող են անհրաժեշտ չլինել երկրորդի համար: Սակայն կա փաստաթղթերի որոշակի ցանկ, ինչն անհրաժեշտ է յուրաքանչյուր պորտֆոլիոյի համար, ինչպես օրինակ՝ կենսագրական տվյալները, անցած առարկաների ցանկը, ժամաքանակը, գնահատականները և այլն:

Քանի որ մեր ժամանակներում լայն կիրառում ունեն տեղեկատվական տեխնոլոգիաները, խրախուսվում է ունենալ նաև պորտֆոլիոյի էլեկտրոնային տարբերակը, որի միջոցով անհատին հնարավորություն է ընձեռվում իրեն ներկայացնել ոչ միայն տվյալ երկրի սահմաններում, այլև արտասահմանում: Էլեկտրոնային պորտֆոլիոն, որը հայտնի է նաև «թվային պորտֆոլիո» անվանմամբ, նույն փաստաթղթերի և տվյալների հավաքածուն է, որը կարող է ներառել նաև նկարներ, ցուցադրություններ, տեսանյութեր, ձայնագրություններ և այլն: Պորտֆոլիոն կոչված է

[19] Իվանյան Գ.Ա., Ճարտարապետության և դիզայնի մասնագիտությունների համար պորտֆոլիոն որպես կրթության որակի խթանման գործոն, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, հատուկ թողարկում N (9), դոկտորանտների և ասպիրանտների գիտաժողով, Ջերմուկ, 15-18.10.2009, էջ՝ 128-132:

փոխարինելու լայն տարածում գտած ռեզյումեներին, CV-ներին և ինքնակենսագրականներին:

Առաջադրված խնդիրների շուրջ ծավալված հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ հիմնական **եզրահանգումները**.

- Առաջարկվում է հանրապետության բուհերում, որպես ապագա որակյալ դիմորդի ապահովման կարևոր գործոն, կազմակերպել չորսից վեց տարեկան երեխաների համար անվճար հիմունքներով դասընթացներ՝ նկարչություն, օտար լեզու, շախմատ առարկաներից, ինչը որոշ չափով կլրացնի նախադպրոցական հաստատություններ չհաճախելու պայմաններում երեխաների աշխարհայացքի ձևավորումը:
- Տնտեսապես զարգացած երկրների բուհերը հանդիսանում են ոչ միայն կրթական, այլև գիտական համակարգի մասը, քանի որ իրականացնում են մեծ ծավալի հիմնարար և կիրառական բնույթի գիտահետազոտական աշխատանքներ, ինչի արդյունքում բուհերի և ձեռնարկությունների միջև համագործակցությունը ձեռք է բերել առավել բազմապիսի և բարդացված ձևեր: Հեղինակի կարծիքով համագործակցության նմանատիպ ձևեր անհրաժեշտ է զարգացնել նաև մեր հանրապետությունում:
- Հեղինակի կողմից բարձրագույն կրթության որակը սահմանվել է որպես՝ «բազմաչափ, բազմամակարդակ և դինամիկ հասկացություն, որը վերաբերում է բուհի ինստիտուցիոնալ նպատակներին և առաքելություններին, ինչպես նաև կրթական համակարգի յուրահատուկ չափանիշերին, ծրագրերին»:
- Բուհերը պետք է փորձեն գտնել ինքնավերլուծության և ինքնագնահատման սեփական մեթոդները: Ներկայումս յուրաքանչյուր բուհ հետաքրքրված է այնպիսի համակարգերի ստեղծմամբ, որոնք կլինեն մշտական, կգնահատեն, կկանխատեսեն, կպլանավորեն և կկառավարեն բուհում տեղի ունեցող բոլոր գործընթացները: Նման ծառայության պահանջարկն արդարացված է և դրա խելամիտ կիրառումը հնարավորություն կտա ուսումնական հաստատությանը հաջողությամբ մրցակցելու կրթական ծառայությունների և աշխատանքի շուկաներում:
- Բարձրագույն կրթությամբ որակյալ ինժեներաշինարարական կադրեր պատրաստելու գործընթացում կարևոր դեր ունի բուհի պրոֆեսորադասախոսական կազմի համար շարունակական կրթության ապահովումը, որն իր մեջ պետք է ներառի վերապատրաստման պարտադիր դասընթացների կազմակերպումը: Այս խնդիրը լուծելու համար, որպես անհրաժեշտ պայման առաջարկվում է բարեփոխել դասախոսի աշխատավարձի ձևավորման համակարգը, այն անմիջականորեն կախվածության մեջ դնելով ոչ միայն յուրաքանչյուրի անհատական ցուցանիշներից, այլ նաև այն ամբիոնի վարկանիշից, որտեղ աշխատում է տվյալ անձը:
- Որոշ հետազոտողներ պնդում են, որ որակի ներքին և արտաքին ապահովման գործընթացները փոխկապակցված են, համենայն դեպս դրանց միջև սերտ կապ գոյություն ունի: Իրականում այս երկու հասկացությունների միջև հնարավոր չէ տարանջատող գիծ սահմանել: Հեղինակի կարծիքով որակի ապահովման արտաքին շահառուները պետք է ներգրավված լինեն որակի ապահովման ներքին գործընթացում:
- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակում բակալավրի որակավորում ստացող անձը պետք է ունենա կոնկրետ բնագավառի տեսական և գործնական խորը գիտելիքներ: Ուստի առաջարկվում է.

ա) Համալսարանի ավագ դպրոցներում կազմավորել օտար լեզվի կաբինետներ: Օտար լեզվի դասերի անցկացման որակի նկատմամբ սահմանել հսկողություն, այդ թվում՝ առնվազն ամիսը մեկ անգամ անցկացնել դասալսումներ: Կազմակերպել օտար լեզուների օլիմպիադաներ, սեմինարներ, այլ միջոցառումներ,
բ) շարունակել և խորացնել օտար լեզվի իմացությամբ ուսանողների արտերկիր կարճաժամկետ և երկարաժամկետ գործուղումների ավանդույթը,
գ) որոշ առարկաներ մագիստրատուրայում դասավանդել օտար լեզուներով:

- Ելնելով մասնագիտությունների խոշորացման անհրաժեշտությունից, որպես առաջին քայլ, ներկայումս գործող շինարարական թվով 5 մասնագիտությունների համար անհրաժեշտ է մշակել չորրորդ կուրսում թվով չորս ընտրովի առարկայական բլոկներով մեկ միասնական ուսումնական պլան և առարկայական ծրագրեր: Մշակման ընթացքում շեշտն անհրաժեշտ է դնել սովորողների ուսումնառության վերջնական արդյունքների վրա:
- Բոլոնիայի գործընթացում ինտեգրվելու, միջազգային աշխատաշուկայում շրջանավարտների շարժունության զարգացման նկատառումով անհրաժեշտություն է առաջացել ավարտական աշխատանքների գնահատման այնպիսի համակարգի ներդրման, որը հնարավորինս կբացառի սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունը, համադրելի կլինի արտերկրում կիրառվող մոդելների հետ և ընդունելի կլինի դասախոսների և ուսանողների համար: Հիմնահարցի լուծման նպատակով մեր կողմից գնահատման համակարգում առաջարկվել է հայտանիշների նոր պահանջների գործառնում:

Ատենախոսության հիմնական դրույթները և արդյունքները հրատարակված են հեղինակի հետևյալ հիմնական գիտական հրապարակումներում.

1. Թովմասյան Ս.Ա., Իվանյան Գ.Ա., Կրթական ծրագրերի վերանայման մեխանիզմները Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, 2013թ., N 5 (37), էջ՝ 129-137:
2. Իվանյան Գ.Ա., Ճարտարապետության և դիզայնի մասնագիտությունների համար պորտֆոլիոն որպես կրթության որակի խթանման գործոն, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, Հատուկ թողարկում N (9), դոկտորանտների և ասպիրանտների գիտաժողով, Ջերմուկ, 15-18.10.2009, էջ՝ 128-132:
3. Իվանյան Գ.Ա., Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի վեցերորդ մակարդակի ներդրման առանձնահատկությունները ճարտարապետաշինարարական մասնագիտությունների համար, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, 2013թ., N 1 (33), էջ՝ 108-113:
4. Իվանյան Գ.Ա., Գիտելիքների գնահատման համակարգի արդիականացման առանձնահատկությունները (ճարտարապետական մասնագիտությունների օրինակով), Երևան, ԵՃՇՊՀ, գիտական աշխատությունների ժողովածու, հատոր IV (51), 2013թ., էջ՝ 108-116:
5. Կոշկարյան Գ.Ն., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Մարկոսյան Ա.Ա., Ինստիտուցիոնալ կարողության ինքնավերլուծության Երևանի

ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի փորձը, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի տեղեկագիր, Երևան, 2010թ., N 4 (16), էջ՝ 73-78:
6. Կոշկարյան Գ.Ն., Մարտիրոսյան Ա.Վ., Հակոբյան Ն.Ս., Իվանյան Գ.Ա., Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգը, կառավարման սկզբունքները և ընթացակարգերը (Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի փորձը), Երևան, ՀՀ ԿԳՆ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2013թ., 60 էջ:
7. Մարկոսյան Ա.Խ., Սարգսյան Հ.Լ., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Որակի ապահովման ներքին համակարգը ճարտարապետաշինարարական բարձրագույն ուսումնական հաստատություններում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, Երևան, 2013թ., 248 էջ:
8. Иванян Г.А., Роль информационных технологий и иностранных языков при внедрении единой образовательной среды Болонского процесса в высших технических учебных заведениях Армении, Сборник статей XI международной научно-технической конференции "Проблемы информатики в образовании, управлении, экономике и технике", Пенза, "Приволжский дом знаний", 2011г., с. 152-154.
9. Маркосян А.Х., Кошкарян Г.Н., Иванян Г.А., Проблемы улучшения институциональных возможностей высших учебных заведений, Материалы международной научно-практической конференции "Архитектурное образование в современном мире: проблемы и перспективы", Алматы, КазНТУ, 2011 г., с.163-167.
10. Markosyan A.Kh., Stakyan M.G., Tokmajyan S.H., Ivanyan G.A., University Chairs As a Factor of Sustainable Devolopment of Construction Engineering Education, Proceedings of the 4th International Conference on Contemporary Problems in Architecture & Construction, Sustainable Building Industry of the Future, Czestochowa, Poland, Vol. 2, 24-27 September, 2012, pp. 579-582.

ИВАНЯН ГОАР АНАСТАСОВНА
ПУТИ ПОВЫШЕНИЯ КАЧЕСТВА АРХИТЕКТУРНО-СТРОИТЕЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – "Экономика, управление хозяйством и его отраслями."

Защита диссертации состоится 12-го декабря 2014г. в 13:30 часов на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете по адресу: г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена управлению решений существующих проблем в обеспечении качества образования, обусловленных внедрением кредитной системы.

Основная цель диссертации - основываясь на изучении опыта европейского высшего образования, разработать и представить рекомендации по организации путей улучшения качества для архитектурно-строительного образования.

Научная новизна диссертации:

- Разработана модель для пересмотра учебных программ архитектурно-строительных специальностей, применение которой позволит на основании общих принципов Болонского процесса, и в систематическом порядке, провести реформы учебных программ в высшем учебном заведении.
- Выявлены основные направления по повышению качества образования, в частности, проблемы самоанализа институциональной возможности, а также обоснована необходимость в глобализации архитектурно-строительных специальностей.
- Разработаны особенности системы оценок в выпускных работах для архитектурных специальностей, которые дают возможность во время оценки работы учитывать не только навыки защиты, но и исполнительские показатели работы.
- Портфолио было рассмотрено в качестве стимула образования, особенно для специальностей архитектуры и дизайна.

В результате проведенного исследования приходим к следующим заключениям:

- Предлагается в высших учебных заведениях республики как важный фактор обеспечения будущего качественного абитуриента, организовать курсы по предметам рисования, иностранных языков, шахмат для детей в возрасте от четырех до шести лет, что в какой-то мере восполнит формирование мировоззрения у детей в условиях не посещения дошкольных учебно-развивающих заведений.
- Вузы экономически развитых стран являются не только частью системы образования, но и науки, поскольку осуществляют в большом объеме фундаментальные и прикладные научно-исследовательские работы, вследствие чего сотрудничество между вузом и предприятием приобретает более разностороннюю и углубленную форму. По мнению автора, такие формы сотрудничества необходимо развивать и в

нашей республике.

- Качество высшего образования автором определено как «разномерное, разноуровневое и динамическое понятие, которое относится к институциональным целям и миссиям вуза, а также особенным стандартам и программам системы образования».
- Вузы должны попытаться найти собственные методы самоанализа и самооценки. В действительности каждый вуз заинтересован в создании таких систем, которые будут постоянны и оценят, предвидят, спланируют и будут руководить всеми процессами, происходящими в вузах. Потребность в таких услугах оправдана, и, их разумное применение даст возможность вузу успешно конкурировать в сфере образования и на рынке труда.
- В процессе подготовки высококачественных инженерно-строительных кадров с высшим образованием важное место имеет обеспечение продолжительного образования для профессорско-преподавательского состава вуза, который должен включить в себя организацию обязательного курса переподготовки. Для решения этой задачи предлагается усовершенствовать систему расчета зарплаты преподавателя, ставя её в зависимость не только от индивидуального показателя, но и от рейтинга кафедры, где работает преподаватель.
- Некоторые исследователи утверждают, что процессы обеспечения внешнего и внутреннего качества взаимосвязаны, во всяком случае, между ними существует тесная взаимосвязь. В действительности, между этими двумя понятиями невозможно установить отделяющую черту. По мнению автора, внешние заинтересованные лица по обеспечению качества должны быть вовлечены во внутренние процессы по обеспечению качества.
- В рамках 6-го уровня национальной аттестации образования РА лицо, получающее степень бакалавра должно иметь глубокие теоретические и прикладные знания в конкретной области. Для этого предлагается:

а) в старших школах университета организовать уроки иностранного языка с постоянным контролям над качеством, а также хотя бы раз в месяц организовать прослушивание уроков. Также организовать олимпиады, семинары и другие мероприятия на иностранных языках,

б) продолжить и углублять командировки студентов, владевшими иностранными языками, за рубеж,

в) несколько предметов в магистратуре преподавать на иностранных языках,

- Как первый шаг к глобализации специальностей для 5 строительных специальностей для четвертого курса необходимо разработать один единый образовательный план и предметные программы с четырьмя выборочными предметами. Во время разработки большое внимание необходимо обратить к исходным результатам студента.
- В целях интеграции в болонский процесс, а также развития мобильности студентов в международном трудовом рынке возникла необходимость во внедрении такой системы оценки выпускных работ, которые исключали бы возможность субъективных подходов, были бы сопоставимы с моделями, применяемыми за границей, и приняты преподавателями и студентами. Для решения проблемы в системе оценки нами было предложено применение новых требований.

IVANYAN GOHAR ANASTAS

THE WAYS OF IMPROVING QUALITY GOVERNMENT OF ARCHITECTUR AND CONSTRUCTION EDUCATION

The abstract of the dissertation for the pursuing of the PhD of Economics in the Field of 08.00.02 - "Economics, Management of Economy and its Spheres."

The defense of the dissertation will take place on December 12, 2014 at 13.30 at the Meeting of Specialized Council 015 of Economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University. Address: 52 Abovyan street, Yerevan, 0009.

ABSTRACT

The thesis is devoted to the problem solutions management in ensuring quality evoked by introduction of credit system.

Main goal and objectives of the thesis. The main goal of the thesis is to develop recommendations for architecture and construction professionals to improve the organizational ways of education quality based on the experience of European higher education system.

Scientific novelties of the thesis are:

- For architecture and construction professions a revising model of educational programs is developed, which will allow implementing reforms in the University in a coordinated manner and based on the general principles of the Bologna process.
- The main trends of improving the quality of education are revealed, particularly the main problems of self assessment of institutional capacity, as well as is confirmed the consolidation of architecture and construction professions.
- For architecture professions the peculiarities of final paper assessment system are developed, which will allow considering not only the skills of defending the paper, but performing indicators as well.
- The portfolio is considered as a stimulating factor in education particularly for architecture and design professions.

Having studied these, the following conclusions are presented:

- As an important factor for having qualified applicants in the higher education institutions of the country it is offered to organize free of charge painting classes, foreign languages and chess classes for children from four to six years old, which will somehow help to develop children's outlook in case of not attending the kindergarten.
- The higher education institutions in economically developed countries are a part of not only educational but scientific system as well, as they carry out large volume of scientific research work, as a result of which the cooperation between higher education

institutions and companies is widening and developing. According to the author such ways of corporation need to be developed in our country as well.

- According to the author the higher education quality is defined as "a multidimensional, multilevel and dynamic notion, which refers to the institutional goals and missions of the institution, as well to specific standards and programs of educational system."
- The higher education institutions need to try to find their own methods of self-analysis and self assessment. Nowadays each institution is interested in forming such systems that are permanent, and appreciate, predict, plan and manage all the processes within the institution. The demand of such a service is justified and its reasonable application will allow the institution to successfully compete in educational service and labor markets.
- While preparing qualified construction and engineering professionals it is very important to provide continuous education for the teaching stuff, that needs to include the organization of training courses. For solving this problem it is offered to reform the lecturer's salary system by connecting it not only to each lecturer's indicators but also to the indicators of the Chair where that lecturer is working.
- Some researchers allege that internal and external quality assurance systems are correlated; anyhow there is a close connection between them. Actually it is not possible to determine a separating line between them. According to the author the external beneficiaries of quality assurance need to be included in the internal process of quality assurance.
- In the 6th level of Armenian National Qualifications Framework for Higher Education a person getting a Bachelor's degree needs to have theoretical and practical deep knowledge of the specific field. For that the author offers:

a) in high schools of the university to organize foreign language lessons with permanent control over the quality of education, at least once a month to make class observations, as well as to organize Olympics, seminars and so on,
b) to continue and deepen business trips of the student knowing foreign languages,
c) to teach some lessons in the magistrates in foreign languages,

- As the first step to the globalization of specialties for the 5 construction specialties that we have now it is offered to develop one unite educational plan and subject programs with four choosing subjects. While developing the plan great attention needs to be paid to the learning outcomes of the student.
- For integrating into Bologna process and developing student's mobility in the international labor market it is necessary to implement such an assessment system, which excludes to maximum the possibility of subjective approaches, is comparable to international models and acceptable by lecturers and students. For the solution of the problem the author offers the implementation of new criteria in the assessment system.